ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/01, 08.01.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Խաչպար» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, ախտահանիչ նյութերի ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդը՝ հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, չկայացած հայտարարելու մասին որոշում:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին

ԲՈՂՈՔ

1) Բողոք բերող անձ՝ <<Խաչպար>> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու 33/7
2) Պատվիրատուի անվանումը՝ ՀՀ ՊՆ
Հասցե՝ ք. Երևան, Բագրևանդի 5

3) Էլեկտրոնային աճուրդի ծածկագիրը՝ « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34»
և առարկան՝ <<Ախտահանիչ նյութերի ձեռք բերում>>

4) Վեճի առարկան և բողոք ներկայացնող անձի պահանջը՝

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ն <<Ախտահանիչ նյութերի>> ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2018 թ. դեկտեմբերի 25-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի հրավերի թվով 8 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի ախտահանիչ նյութեր (կից փաստաթուղթ թիվ 2):

Հրավերի Հավելված թիվ 6՝ << ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ>>-ի Հավելված թիվ 1՝ <<ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ>>-ում հրավերում առկա թիվ 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների համար <<տեխնիկական բնութագիր>> սյունակում գրված են միևնույն՝ << *Ապրանքները պետք է ունենան. 1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):* >> պահանջները (կից փաստաթուղթ թիվ 3, էջեր՝ 3 և 4, արված նշումները):

Այդ պահանջները խտրական են, սահմանափակում են ԵԱՏՄ արտադրողների ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը աճուրդի թիվ 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժիններին, քանի որ ԵԱՏՄ արտադրողների ապրանքների համար պարտադիր պայմանը ԵԱՏՄ <<Պետական գրանցման վկայական>> և <<Համապատասխանության դեկլարացիա>> փաստաթղթերի առկայության պահանջն է, ինչը բացակայում է Պատվիրատուի պահանջների ցանկում, իսկ առկա պահանջները չհիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար:

<<Խաչպար>> ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասի և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34>>» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին հայտարարությունը և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34>>» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 2018թ. դեկտեմբերի 25-ի թիվ 1 որոշմամբ հաստատված՝ <<Ախտահանիչ նյութերի>> ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերը՝ թիվ 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, և դիմելով ՀՀ Գնումների Բողոքարկման Խորհրդին խնդրում է՝ ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝ պարտավորեցնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34>>» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34>>» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը չկայացած հայտարարելու որոշում հրավերի թիվ 4-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով:

ՄՏԻՊ N 30-19
«08» 01 2019թ.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ ՀՀ ՊՆ-ի <<ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/34>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի տեխնիկական բնութագրում առկա << *Ապրանքները պետք է ունենան. 1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները):* >> պահանջները

ա) չիմնավորված խոչընդոտներ են առաջացնում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար, հավասար պայմաններ չեն ապահովում հնարավոր մասնակիցների, այդ թվում՝ նաև <<Խաչպար>> ՍՊԸ-ի համար՝ հակասելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին;

բ) չեն նպաստում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և չեն խրախուսում նրանց միջև մրցակցությունը՝ հակասելով <<Գնումների մասին>> ՀՀ Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին:

6) Կից ներկայացնում եմ բողոքարկման վճարի անդորրագիրը:

Առդիր՝ 7 թերթ:

<<Խաչպար>> ՍՊԸ տնօրեն՝ Ամբատ Բալասանյան

08 հունվարի 2019թ.

E-mail: khachpar.llc@gmail.com

Հեռախոս՝ 091-45-90-45